

ԳԱՎԻԹ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ (ՀԻԵՐԱՐԽԻԱՅԻ) ՀԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է աստիճանակարգության (հիերարխիայի) գիտական հասկացության, էության և հատկանիշների հետ կապված հիմնախնդիրները:

Հոդվածում աստիճանակարգությունը (հիերարխիան) սահմանվում է որպես՝ ստորինից դեպի վերին, կարգով բաշխված, տարբեր բազմամակարդակ համակարգեր բնութագրող տարրերի հաջորդական ենթակայական համակարգ:

Հիմնաբառեր- աստիճանակարգ, հիերարխիա, համագիտական, համակարգ, ենթակայություն:

Փիլիսոփայական հանրագիտական բառարանը սահմանում է հիերարխիան որպես «բարդ բազմամակարդակ համակարգերի կառուցվածքային կազմակերպման սկզբունք, որը կայանում է վերինից դեպի ստորին կարգով մակարդակների միջև փոխազդեցությունների կարգավորման մեջ: Երկու կամ ավելի մակարդակներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես ղեկավարող ստորին տեղակայվածների և որպես ղեկավարվող, ենթակայող վերը տեղակայվածների նկատմամբ»:

Ընդհանրապես գրականության մեջ աստիճանակարգությունը սահմանվում է որպես ստորինից դեպի վերին կարգով բաշխված, տարբեր բազմամակարդակ համակարգեր (սոցիալական, քաղաքական, լեզվաբանական և այլն) բնութագրող տարրերի հաջորդական ենթակայության համակարգ:

Գիտական, տեղեկատվական և հանրագիտական հրատարակումներում ընդունված է թարգմանել «hierarchia» հունականից որպես «սուրբ իշխանություն» ((hieros) սուրբ և (arche) իշխանություն), սակայն դա միակ տարբերակը չէ՝ այսպես, մակերդոնյան հետազոտող Մ. Միցայկովը գրում է, որ «հիերարխիա» բառը ունի հունական ծագում (hieros՝ աշխարհ + arche՝ տիրում եմ) և կիրառվում է «ծառայողական աստիճան», «ըստ աստիճանի կարգ...»: «Հիերարխիա» տերմինը մեկնաբանվում է նաև ըստ ստորինների վերիններին ենթակայության սկզբունքների ուղղահայաց կարգով տեղաբաշխված դրույթների (կոչումների և աստիճանների) համախումբ: Հիերարխիան բնութագրվում է այնպիսի կերպով լիարժեք ենթակայությամբ, որ ամբողջ իշխանությունը, այսինքն՝ որոշումներ ընդունելու և հրամաններ արձակելու իրավունքը կենտրոնացված է հիերարխիկ աստիճանի կամ «բուրգի» ամենավերևում²:

Ի սկզբանե «հիերարխիա» բառը կիրառվել է քրիստոնեական Եկեղեցու կազմակերպման բնութագրության համար: Ինչպես նշում է Դ. Պումանը, «հիերարխիա» հասկացության կիրառության կերպարը բառարաններում և գիտական գրականության մեջ մինչև XIX դարի վերջը ցուցադրում է այդ հասկացության հին, սերտ կապը կրոնական ինստիտուտների հետ:

Տվյալ հասկացության ծագումնաբանության առումով հետաքրքրություն է առաջացնում «հիերարխիայի» նախնական սրբազան իմաստի վերաբերյալ Վ. Մ. Սերգեևի և Կ. Վ. Սերգեևի դատողությունները: Նրանք նշում են, որ «Դիոնիսի համաձայն, հիերարխիան՝ սուբյեկտներում աստվածային կարգի վերարտադրությունն է, հայելի, որը արտացոլում է վերին, սրբազան աշխարհը, և դրա մակարդակները իրավաչափ է համեմատել դեպի Աստված տանող աստիճանի հետ: Հիերարխիան կարող է գոյություն ունենալ ինչպես «վերևում» (այդ դեպքում ունենք երկնային հիերարխիա), այնպես նաև երկրի վրա (եկեղեցական հիերարխիա): Հիերարխիայում սուբյեկտի տեղը կախված է աստվածայինին նրա մերձավորության աստիճանից: Այլ խոսքերով, հիերարխիան հանդիսանում է աստվածայինին նմանվել փորձող սուբյեկտների փոխգործունեության համակարգ, իսկ դրանում վերջիններիս տեղը սահմանվում է այդ նմանեցման արդիականացման աստիճանով. Հիերարխիան Դիոնիսի կողմից մեկնաբանվել է որպես հոգևոր, սակայն ոչ մի կերպ որպես սոցիալական կատեգորիա, այն բացառապես ուղղված էր մարդու ներաշխարհին՝ հանդիսանալով միայն աստվածանմանության ձև: Սակայն դրա հետագծումը եկեղեցու կառուցվածքին ավտոմատ հանգեցրեց հիերարխիայի «ինտերիորիզացման», և տվյալ տերմինը ստացավ երկրորդ նշանակություն՝ աստվածանմանության ձգ-

տող մարդկանց սոցիալական կազմակերպման ձև»³ :

Ժամանակի ընթացքում «հիերարխիա» տերմինի նախնական նշանակությունը ձևափոխվեց, տեղի ունեցավ դրա «աշխարհականացում», էականորեն ընդարձակվեց կիրառության ոլորտը, փոփոխվեց իմաստային բեռնվածությունը՝ «հիերարխիա» հասկացության զարգացման գործընթացում դրա նշանակությունը զարգանում էր «սուրբ գիտելիքի» առկայության շնորհիվ՝ հասարակության կայունությունը սրբազան ձևով ապահովող սուբյեկտների կազմավորված աստվածային կարգին, վերջիններիս մերձեցվածության աստիճանը ամրագրող համախմբից, սուբյեկտների կազմավորված համախմբի միջոցով որոշակի հստակ տրամաբանությամբ պայմանավորված՝ սուբյեկտների փոխադարձ բաշխմամբ սոցիալական բուրգի նշանակությանը⁴ :

Ներկայումս «հիերարխիա» հասկացությունը հանդիսանում է կարևոր՝ համակարգերի ընդհանուր տեսության մեջ, լայնորեն կիրառվում է փիլիսոփայական և գիտական գիտելիքում: Օրինակ, Է. Մ. Խակիմովը (հիերարխիայի և ոչ հիերարխիայի խնդրայնությունը ուսումնասիրող առավել հայտնի փիլիսոփաներից մեկը) տալիս է տվյալ հասկացության 11 սահմանումներ, որոնցում ուշադրությունը կենտրոնացվում է վերջինիս տարբեր ասպեկտների վրա⁵ :

Դիալեկտիկ նյութի փիլիսոփայության մեջ հիերարխիան դիտարկվում է որպես «հասկացությունների և տերմինների կոմպլեքս, որը բացահայտում է զարգացող նյութի ձևավորումների փոխհամագործակցության մակարդակների առանձնահատկությունները»⁶ : Միևնույն ժամանակ, հիերարխիայի էական բնութագիրը, այն ընդհանուր հայտարարը, որը միավորում է վերջինիս ընկալման բոլոր տարբեր մոտեցումները, բավականին հակիրճ կարելի է սահմանել որպես՝ «աստիճանակարգության գաղափարը հանդիսանում է անհավասարության գաղափար»։ Որևէ բան անհրաժեշտ չէ ավելացնել այս պարզ, հստակեցված և համապարփակ ձևակերպմանը:

Նշված դիրքորոշումներից հիերարխիկ սկզբնաղբյուրները բնորոշ են առանձին երևույթներին, առարկաներին, գործընթացներին և ամբողջ Աշխարհին՝ որպես «նյութական մարմինների համախումբ, որը իրենում ընդգրկում է մեզ շրջապատող իրականության ամբողջ բազմաձևությունը»⁷ :

Աստիճանակարգության հետագա ընկալման համար կարևոր է կանգ առնել հիերարխիայի և ոչ հիերարխիայի կապերի վրա և հեղինակի կողմից հիերարխիայի ոչ հիերարխիայի հետ դիալեկտիկ

հակասական միասնության վերաբերյալ փիլիսոփայական կանխադրույթի կիրառությանը հենված ամրագրել դրանց ուսումնասիրության բարդությունը, ինչն էլ արտահայտվում է նաև համակարգային պարադոքսում («ոչ հիերարխիկության պարադոքս»), որի էությունը կայանում է նրանում, որ «...հետազոտության համակարգային մեթոդների, համակարգային մտածողության նկարագրության համար... մենք ստիպված ենք ներկայումս կիրառել ըստ իրենց էության ոչ համակարգային պատկերացումներ, հասկացություններ և մեթոդներ...»⁸, իսկ հիերարխիայի կառուցման համար՝ ոչ հիերարխիկ կատեգորիաներ:

Ժամանակակից գիտության մեջ ընդունվում է, որ հիերարխիան մտահանգվում է միայն բազմամակարդակ (որպես նվազագույն՝ երկմակարդակ) համակարգի շրջանակներում, ինչն էլ մեթոդաբանորեն պայմանավորում է հիերարխիայի հարցերի ուսումնասիրության մեջ որպես վերլուծական և ներընթացական մեթոդների սինթեզ համակարգային մոտեցման կիրառության անհրաժեշտությունը⁹, ինչի էությունն էլ կայանում է ուսումնասիրվող օբյեկտների նկատմամբ առանձնահատուկ՝ նպատակահարմար տեսանկյան մեջ. Ամենը սկսում է համակարգի «հավաքման կետի» դերում հանդես եկող որոշակի նպատակի առաջադրումից, որի անկյան տակ հետազոտողը օբյեկտում առանձնացնում է համակարգաձևավորող կապերը, հաստատում դրանց կազմությունը և կառուցվածքը և «հեռացնում» մնացյալը¹⁰ :

Միևնույն ժամանակ, որոշակի օբյեկտի՝ որպես համակարգի դիտարկումը, նշանակում է հետևյալի անհրաժեշտություն.

ա) համակարգաձևավորող նպատակի առանձնացում (միևնույն օբյեկտը կարող է դիտարկվել մի քանի համակարգերի որակով, օրինակ, մանրադիտակը որպես մեխ խփելու միջոց և որպես միկրո աշխարհի ուսումնասիրության սարքավորում՝ էությունը, երկու տարբեր համակարգեր),

բ) տվյալ օբյեկտի դիտարկում ընտրված նպատակի անկյան տակ, օբյեկտ-համակարգի էական հարաբերությունների և բնութագրիչների ընտրություն և աննշանների «ազատում» (օրինակ, հարձակվողից գրքով պաշտպանության ժամանակ «գիրքը – պաշտպանության միջոց» համակարգի էական հատկանիշներ կհանդիսանան դրա ֆիզիկական հատկանիշները, այլ ոչ դրա կազմի էսթետիկ արժեքավորությունը և ոչ էլ տեղեկությունը, որը կարելի է ստանալ գրքի ընթերցանության դեպքում),

գ) համակարգի տարրերի ելակետային միա-

վորների, համակարգի գործառնական հատվածների մասնատում, վերջիններիս սեփական կազմությունը կարելի է անտեսել, տարրերի համախումբը (հավաքածուն), առանց իրենց միջև կապերի, անվանվում է կազմություն,

դ) համակարգի կառուցվածքը՝ համակարգի տարրերի միջև նպատակահարմար կապերը:

Հիերարխիան՝ ժամանակակից համագիտական ընկալումներով, հանդիսանում է համակարգում տարրերի կապերի (հարաբերությունների)

որոշակի ձևի մոդել, որին գրականության մեջ հակադրվում է (որպես հիերարխիայի առավել վառ արտահայտում) ցանցային կազմակերպումը, կամ հիերարխիան՝ համակարգում է հարաբերությունների կարգը, որը հենված է կոորդինացման, իշխանության և ենթակայության հարաբերությունների վրա:

¹ Философский энциклопедический словарь/ гл. ред. Л. Ф. Ильичев и др. М.: Сов. Энциклопедия. 1983. С. 202.

² Мицайков М. Иерархия в праве// Вестник Московского ун-та. Сер. 11. Право. 1999. N 6. С.53-54

³ Седеев М. С., Сергеев К.В. Механизмы эволюции политической структуры общества: социальные иерархии и социальные сети // Полис. 2003. N 3. С. 7.

⁴ Hierarchy Matural and Social Sciences / ed. D. Pumain. P. 223.

⁵ Хакимов Э. М. Диалектика иерархии и иерархии в философии и в научном знании. Казань. 2007. С. 22-23.

⁶ Նույն տեղում: էջ 138.

⁷ Хакимов Э. М., Նշվ. աշխ. էջ 8:

⁸ Садовский В. Н. Основания общей теории систем. Логико-методологический анализ. М.: Наука. 1974. С. 239.

⁹ О’Коннор Д., Макдермотт И. Искусство системного мышления. Необходимые знания о системах и творческом подходе к решению проблем. М.: Альпина Паблишер, 2009. С. 12.

¹⁰ Նույն տեղում: էջ 12-13:

Давид Акопян

Аспирант института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

Общенаучное понятие, сущность и свойства иерархии

В настоящей статье автором обстоятельно рассмотрены проблемы, связанные с научным понятием, сущностью и свойством иерархии.

В статье иерархия определяется как основанная на подчинении система расположенных в порядке от низшего к высшему элементов, характеризующих различные многоуровневые системы.

Ключевые слова: иерархия, общенаучный, система, подчинение.

David Hakobyan

PhD student at the Philosophy, Sociology and Law Institute of the
National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

Scientific Notion, Essence and Features of Hierarchy

In the present article the author in detail discusses the issues connected with the scientific notion, essence and features of hierarchy.

In the article hierarchy is determined as a system based on subordination and located in an order from the lower to higher elements characterizing different multi-layer systems.

Keywords: hierarchy, scientific, system, subordination.